Դհոլ

Հարվածային երաժշտական նվագարան է, որը երկթաղանթ գլանաձև իրանով թմբուկ է: Ուռենու, ընկուզենու կամ սոճու փայտից պատրաստված գլանաձև իրանի երկու բաց կողմը ծածկված է թաղանթով (հիմնականում՝ այծի, հորթի կամ գառան կաշվից, մեկը՝ հաստ, մյուսը՝ բարակ: Թաղանթները ձգվում են մետաղե օղերին և կարգավորվում ձգող պարանների օգնությամբ: Վերին բարակ թաղանթին հարվածում են ձեռքի մատներով կամ ափերով, երբեմն՝ բարակ ճիպոտներով, իսկ հաստ թաղանթին՝ կոպալով (հաստ, ամուր փայտ):

Դհոլն ապահովում է ոչ միայն կատարվող երկի կայուն ռիթմը, ընթացքը, այլև հատուկ երանգ հաղորդում կատարմանը, պարային երաժշտության մեջ օգնում նվագածուներին և պարողներին՝ արագ կողմնորոշվելու պարային տարբեր ռիթմերի այլևայլ փոխակերպումների ընթացքում:

Դհոլը կատարողի ձկուն մատների տակ կարող է հաղորդել տարբեր զգացմունքներ: Տեխնիկապես հարուստ է, հնչեցնում է գեղեցիկ ռիթմեր մեղմ մատնահարվածներով, հաստատուն ափահարվածներով ու բարակ փայտիկի և կոպիտ կոպալների թնդուն հարվածներով:

Դհոլը կարող է ուղեկցել թե՛ փողային, թե՛ լարային նվագարանների, նաև կարող է հանդես գալ մենակատարմամբ՝ ներկայացնելով իր տեմբրային ու ռիթմիկ հնարավորությունները՝ դհոլահարի վարպետության շնորհիվ: